

ՔԱՐՏԱՆՈՐՈՒԹՅՈՒՆԻ
 Պոչտային համար
 Տարեկան 10 Պր.
 Վեցամսյա 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսյա 6 »
 ԿԱՆՈՒԿՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք եւ չեն տրուի
 —)(—
 Իրանցիական տղոր 20 սան-
 քիւն եւ Երեւանի ան ի սան-
 քաներու համար 20 Օլօ
 գնից կը լուսայ :

ՇԱՐՋՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկիչ
 Խմբագրութեան հասցեն
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՔԱՍԱՆՆԱՆՍՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՐ

—)(—

Մարտիկան կը գրեն թէ Տ. Իւթիւճեան եպիսկոպոսը իր եպիսկոպոսական անդրանիկ պարագր մատուցեր է այդ քաղաքին մէջ : Ն. Սրբազնութիւնը շուրջափող ամէն պարագայ, ի հարկէ ասկէ ետքը անտարբեր չի կըրնար թողուլ մեզի, քանի որ Տ. Արսէն վարդապետի պաշտօնէ զազրելէն ի վեր, կաթողիկոսական որոշումով երկրագունդիս մէկ կարեւոր մասին համար, Հոգեւոր Հովիւ Նշանակուած է Տ. Իւթիւճեան : Պուկարիա եւ, Ռուսմանիոյ, Երուսաղիմ . . . Սփրիկէի, Չիւսու, Ճաբոնի պէս, ու կամ կանախ (սակի ու զքան կանուխ) իր մէջ անանելու բարտար պիտի ունենայ արարատեան այդ նոր առաքելալը, որ վարդապետութեան օրով Պօքալէն Պսիւս, ու անկէց կարին ու Եզրիպոս շրջելէն ետքը, հիմակ ալ, զուցէ հայրապետական օրհնութիւնով, արագաթուղի աղանի ի մը փոխուած ըլլալ կը թուի :

Սպասելով Ն. Սրբազնութեան ժամանակին, փութանք յայտնելու թէ մենք վարդապետի արդէն սկզբունքով համաձայն չենք որ ու է տեղի մը հայերը չափէն աւելի յոյս գնեն եկեղեցականի մը վրայ, և իրենք, մեղուութեան մէջ ընկողմանած անկէց սպասեն ազգային ամէն յառաջդիմութիւն՝ Լրթական, յեղափոխական և վերջապէս ամէն կարգի ասպարէզներու վրայ : Զարհուրելի աստիճանի սինակնկալութիւն մըն է այդ, և ապաջոյցները ասկէ ետքը չէ որ պիտի յայտնուին : Եկեղեցական ընտիր առաջնորդները Հայաստան պէտք է երթան. այն տեղի վարչական կազմակերպութիւնն է որ ամէն վայրկեան զգալի կընեն անձնուէր, հեռատես, և գիւլանագէտ հովիւներու պէտքը, Հոն թող երթան ամէն անոնք որ ազգին սէրը իրապէս կը զգան սրտերուն խորը, և ըմբռնած են թէ ի՛նչ նշանակութիւն պէտք

է ունենայ մեր մէջ եկեղեցական մը :

Ըսել չենք ուզեր անշուշտ թէ արամադիր չենք ընդունելու Տ. Իւթիւճեանի այցը : Թէեւ այդ ընտրութիւնը մեր կանխադրյն հաւանութեան չենթարկուեցաւ, և սակայն Տ. Սրբազնեան եպիսկոպոսին համարման ընտրութիւնը Ամբրիկայի վրայ, Հայրիկին կամայական որոշումներուն վարժեցուցած է մեզի : Միայն թէ հաւատք չունինք որ Իւթիւճեան եպիսկոպոսին պաշտօնը արդիւնք մը տայ ու է տեսակէտով, քանի որ նոյն իսկ եթէ հանճար մը ըլլար այդ եկեղեցականը, չը պիտի կրնար ընդգրկել այդքան վիթխարի տարածութեան մը վրայ յիւր ու ցան սիւսուած հայերը :

Դանուբի կողմերը զրկուած եկեղեցականէ մը երկու բան կարելի է սկիզբալի. կամ ու է քաղաքի մը մէջ նստելով եկեղեցիներու բարեկարգութեան և քահանաներու բարեկրթութեան վրայ հակել, իսկ կրօնական պաշտօնով մը, և կամ՝ հայութեան ողի մը հանդիսանալ և ազգայնութեան զգացումներուն վերաբարձարձման նուիրել իր բոլոր կրօնովը և ջանքերը :

Այս երկու տեսակէտներով ալ Տ. Իւթիւճեանի պաշտօնը այժմէն վերայած կարելի է համարել : Կրօնական տեսակէտով իր գործունէութեան շրջանակը այնքան ծաւալուն է, որ իր ներկայութիւնը աննշմարելի պիտի անցնի, անզօր և անազգեցիկ : Իսկ ազգայնութեան տեսակէտով, աւագ, Իւթիւճեան Սրբազանը թէեւ շատ կարող, բայց բաւական հեռի է մարմնացնելէ այն իտէալ եկեղեցականը զոր կերպովնք, և որուն ներկայութիւնը միայն Ռուսմանիոյ մէջ տաննակ մը տարիներ հարկաւոր է, քիչ մը քակելու համար այն ստառոյցները որոնց մէջ պարփակուած են այն տեղի միայնիներուն ազգայնութեան զգացումները :

Հետևաբար Պուկարիոյ և Ռուսմանիոյ առաջնորդական խնդիրը միշտ իր նախնական վիճակին

մէջ կը մնայ :

Հայրիկ, որ ամբողջ կովկասահայութեան կարծիքին համեմատ, չէ ըրած այն ինչ որ կարելի էր ընել հայ զպրօցներու յափշտակման գործը կասեցնելու, անշուշտ այս հովուական խնդրին մէջ աւելի հեռատես և նպատակաշարժար կարգադրութիւն մը չի պիտի ընէր. և սակայն նոյն ինքն Իւթիւճեան Սրբազանը զգացնելու էր այս բաները և իր զուխը ունելով երթալու էր Հայաստանի սարերը շրջելու և միթիթարելու այն տեղի հալածուած հայերը : Վի հովուութիւնը հո՛ն է միայն ճշմարտացոյց հոն է միայն ցուպ, և ջախջախալը հոն է որ իր նիւթական արժէքէն տարբեր արժանիք մը կը ստանայ :

Այս մտածումները սակայն պատճառ մը չեն որ լաւագոյն ընդունելութիւնը չվերապահենք «մեր» նորընտիր Հոգեւոր Հովիւին և կար ու կարողութիւն մաղթենք իրեն, զիտնալով հանգեծ որ Ն. Սրբազնութեան թանկագին անձնաւորութեան մանրագիտական մէկ կատարակն է միայն դժբախտաբար, որ մեզ պուկարահայոց կը պատկանի :

ԳԱՍԵՐ-ԱՐՇԱԿԻՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 23 Նոյն.

Ահաւասիկ այն միջոցները զորս թուրք կառավարութիւնը առած է ու է նոր գանդատի տեղի չտալու համար . . .

1. Անցեալ ամսոյ վերջերը խուժան մը յարձակելով Բաղէշի շուկային վրայ, սկիւրիները կողոպտած և 20 հոգի ալ ծանրապէս վիրաւորած է. որոնցմէ, ինչպէս նաեւ զբաւական մեծոգներ կան : Չենք գիտեր թէ այս ոսկերիները յեղափոխական ո՞ր կուսակցութեան կը վերաբերէին, որ այսպիսի պատժոյ մը արժանացան : 2. Կառավարութիւնը անհետարի նեղութիւններ կուտայ ճամբորդներու համար, նոյն իսկ Անասուրէն գործով եկող հայերու : 3. Տուրքերու համար մեծ նեղութիւն կը արուի և ասոր երեսէն շատերը պապական եկեղեցին կը զիմեն : 4. Ամբողջ գետտներու մէջ ահ ու

սարսափը կը տիրէ արդէն. և այս պարագան բաւական է արդէն բարենորոգմանց սկզբնաւորութիւնը աւելեցուց : Երկու օր առաջ վանայ կուսակալին մէկ հեռագիրը հրատարակուեցաւ թուրք լրագրաց մէջ թէ՛ վանայ շրջակայները հիմա տիրող անզորութիւնը ո՛չ մէկ ատեն տեսնուած է : Կառավարութեան սովորական խաղն է այս :

Պատրիարքարանը ոչինչ կրնայ ընել այս պարագաներուն մէջ, ոչ իսկ եկած բողոքները մատուցանելու : Իզմիրլեանի ընտրուելը իսկ տեղեկագրուած չէ Դրան և ասոր հակառակ Դոնէն ծանուցագիր մը եկեր է Պատրիարքարան թէ՛ «կը լուռի որ Խառն Ժողովոյ անդամներէն Գրիգորիս Յովհաննէսեան և Վահրամ Սանկունի եպիսկոպոսները, Իզմիրլեան նախկին Պատրիարք ընտրել են առաջնորդ Եզրիպոսի, բայց Իզմիրլեան ամբաստանուած է և հետեւաբար չը կրնար առաջնորդ հաստատուել» :

Ո՞վ է հարցնողը թէ ի՞նչ է Իզմիրլեանի վրայ ծանրացող ամբաստանութիւնը և թէ ո՞ր ատեանէն զատապարտուած է, ու ի՞նչ հիման վրայ : Պատրիարքը, ինչպէս կը գրէ Արևելի, եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը և լուսանկարներու հաւաքածոն պատրաստելու կարևոր գործով կը պարագլի, թէեւ կաթողիկոսութիւնը մէկ կողմէն կը յառաջանայ հսկայ քայլերով վանայ ու հիկոմիդիոյ մէջ, ինչպէս կը հաստատէ Ն. Ս. օսկանը Բիւզանդիոն :

Պոլսոյ հայ-թուրքի կեդրոնը եղող Բերաի թաղը Խնամակալութեամբ կը մատակարարուի, որովհետեւ այդքան խառնի խուռն բազմութեան մէջ անկարելի կը լլայ օրինաւոր քուէարկութեամբ թաղական ընտրել : Անգամ մը Իզմիրլեան Սրբազանի պատրիարքութեան օրով Թաղական Խորհուրդ մը ընտրուեցաւ որ քիչ յետոյ հրատարական տալով, 5-6 Խնամակալութիւններ կազմուեցան : Մինչեւ հոս հետաքրքրական բան մը չկայ. բուն խնդիրը ասկէց վերջն է : Այս անգամ դարձեալ քուէով Թաղ Խորհուրդոյ ձեռնարկուած ըլլալով, նուրբանը ամէն ազգեցութիւն ի գործ դրու և եկեղեցւոյ պաշտօնեաներէն մէկ քանին ձեռք անցուց. և ասոնք գիտեստեն ու սրճարան պատկով, յաջողեցան նուրբանը ընտրել տալ : Գուէարկութեան չեն մասնակցած անոնք, որ անուն մը ունին Բերաի մէջ. այլ յետին թաղերու բնակիչները որոնց քուէները ճշուտով խըրուած են : Այսպէսով 1,200 հոգիէ՛ 600 հոգի մասնակցելով, նուրբան ստացաւ 400 քուէ. այս ալ զարմա-

Ք Ր Ո Ն Ի Կ

Այլ թամարէն կը գրեն թէ նա-
րեկայ վանքին մէջ նոր սրբա-
նոց մը բացուել է ու յայտնի 20
որեր կը խնամուին: Պատրի-
արքայան, որոշումով այդ սրբա-
նոցը Այլ թամարայ վանքը պիտի
փոխադրուի:

Ատանանէն կը գրեն թէ բաւա-
կան թուով ամերիկացի հայեր
հայրենիք վերադարձեր են:

Անցեալ շաբաթ օր Խաղաղի
մէջ կատարուել է Գալֆանան
որբանոցի 32րդ տարեգարձը:
Այս ան թիւ պատրիարքը պատա-
րագրեալ և քարոզ խօսեր է գիւ-
ղին և կիւղեցիներն մէջ:

Կաթողիկոսը քայքայվաբո-
րէն խնդրեր է պատրիարքէն որ
այս ձևով եպիսկոպոսոց չը գրկէ
էջմիածին, որովհետեւ ինք ձր-
մեաւ թիֆլիզի մէջ պիտի անցը-
նէ:

Անցեալ ուրբաթ օր, Բերախ
մէջ կաղի խողովակ մը անհաղին
չափով մը պայթելու և քանի
գուներու վնասեր է: Չարդ ու
փշուր ընելով շրջա այ բոլոր
չէնքերէն ապակիները: Բեթա-
ցիները և սուրիման թիւնը այն
պատճառով անպարտաւոր մը
փայրկեաններ անցուցեր են:
Թումբերու անշէջ յիշատակն է:

Սոսորանիէի քանի մը ան-
գամներուն առաջարկին վրայ
նախարարաց խորհուրդը շնորհ է
ներքին գործոց նախարարու-
թեան այն որոշումը որով խա-
նութիւնը զոց պէտք էր մնային
կիրակի և տօն օրերը: Բայց
մինչեւ որ Սոսորանիէն որոշում
տայ, խանութիւնը պիտի կրնան
բացուիլ միայն կէս օրէն ժամ
մը առաջ:

Ա՛յն մէջ ի՞նչի մէջ կը կար-
գանք: Պէրլինի համալսարանին
բրոֆէսորներէն Պ. Ռոզենպայն
մտերն հնարաւորական ճամբոր-

դութիւն մը պիտի կանոնէ հա-
յտատան և Սիրիա:

Մարտիկոսի մէջ Ռեյվէյլ Գո-
սիայ տեսն ինք իմ մը պիտի
հիմնուի, նպատակ տնտեսաբան
պաշտպանել բոլոր ճնշուած աղ-
ղերը և անոնց կրօնքի և ցեղի
խորթեան:

Քարիզի հայերը կազմած են
նոր յանձնաժողով մը, որ նպատա-
ններ պիտի հասցնէ նիկոսիայի
որբանոցին:

Անգլիական հիւպատոսին
պահանջման վրայ Մահլամ զիւ-
ղին մէջ պարտիկներու և քրտե-
րու ձեռքով զլիստուած Գ հայ
զաղթականներու զուխները հա-
յրուէն յանձնուէր և Սափրաի
հայ կաթողիկոսը արգելադրեց մի-
ջոցաւ թաղուելու և տխուր և սըր-
տածմիկ արարողութիւնով: Ա-

րբայ ականի Ամիր-նիզամը, ո-
րուն համա կրօնի թէ բոլոր
խժղութեանց իրական պատ-
ճառն է, և ևս կերպու թեան հա-
մար Սալմաստի Նախ-նի-Հէքի-
մէն պաշտօնանկ ըրեր է, նոր և
սակի կատարի տարուկ մը զըր-
կիւղի անոր տեղ:

Սալմաստ սարդը հայ զաղթա-
կաններուն թշուառ վիճակը ան-
նկարագրելի է: Յատուկ յանձ-
նաժողով մը կազմուել է անոնց
օգնելու նպատակով:

Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն Դ Ե Պ Բ Ե Ր

Թ Ո Ւ Ի Բ Ի Ա

Կրէտէն Իզմիր շրջուած
թուրք զինուորները, անսնելով
թէ զիրենք վասիւրէն շանցնելու
համար ցամաքէն կուզեն իրենց
տեղերը զրկել: միւս կողմէ ան-
լոր տանջանքներու մատնուած
ոսմիկի, հայոց տոհմ և երբեմն ալ
անոնցի պակասութեան պատ-
ճառով, միւսներ են իրենց զէն-
քերը յանձնել, և սպան մը իրենց

զժգոհութիւնը ապտամբութեան
մը գոյնը առեր է: Իզմիրի կու-
սակալը պալատան հրահանգով
խեղճ անոնց բոլոր պահանջում-
ներուն գոհացում առեր և որու-
չեր է Աւու ծովու ճամբով զըր-
կիւղի շանցնել: Ոչ նուազ զժգո-
հութիւն ծագած է նաև Իզմիր
հանուած զօրքերուն կողմէ, ո-
րոնք սպան մը քաղաքը քարու-
քանդ ընել սպառնացեր են:

Թէև թուրք լրագիրները կը
հաւատեն թէ Եթէնի կողմերը
ամէն բան լաւ վիճակի մէջ է,
բայց նոյն հեռուոր տեղերէ հա-
սած արժանահաւատ լուրերը կը
հաւատեն թէ Հոսէյն Սա-
նախի մէջ գործող թուրք զի-
նուորները շարաշար պարտու-
թիւններ կրեր են արաբացի ա-
պստամբներու կողմէ: Իսլամ-
թիւ թուրք զինուորներ մեռած
ու վիրաւորուած են:

Պրանսի և Թուրքիոյ յարա-
բերութիւնները սոսուս հաս վեր-
ջին ծայր ձգտուած են: Սեր ըն-
թեացողները կը յիշեն Պրանսի
նախարարապետին Միւլիեր պէյի
տուած պատասխանը, Գանդիսի
յաջորդին անուամբն առ թիւ:
Այնու Պէլժոն կը գրէ թէ Պոլսոյ
մէջ երբեք այսքան տանու թիւն
ցոյց չէր տրուած Պրանսի հան-
դէպ: Պ. Տէլքասէ կատարելա-
պէս զգացած է թէ իր նախոր-
դին Հանթո Փաշայի բովանդակ
քաղաքականութիւնը արեւելեան
խնդիրն մէջ, ուրիշ օգուտ մը
չէ տնեցած, և թէ ոչ մէկ կող-
մէն Պրանսի երբեմնի բարի
համբար նոսմացնել, և միւս
կողմէ զերման տարրին ազդե-
ցութիւնը աւելցնել թուրքիոյ
մէջ: Պրանսի այժմ բոլորովին ներ-
հակ և հակաթուրք քաղաքակա-
նութեան մը կը հետեւի, որ մի-

այն օգուտներ առաջ կրնայ բե-
րել հալածուած քրիստոնեանե-
րու համար: Հանթո Փաշայի անկումով
Սալմաստը մեծ աջակից մը կըր-
նընցուցած է, ինչպէս տիրա-
հաչակ Լոպանօֆի Քահր մեծա-
ղոյն հարուածը տուած է թուրք
կառավարութեան մարդասպան
ճրագրութուն: ամենուն կարծիքն
է թէ Սալմաստի վի Ռուսիան Լո-
պանօֆի Ռուսիան չէ: և ո՛չ ալ
Հանթո Փաշայի անկումով զոյս թիւն
ունի այժմ, ժամանակները փոխ-
ուած են:

Ժամանակի այս բարեբաւորիկ
փոփոխութեան ամենէն պերճա-
խօս ապացոյցը չէ՞ կրէտէի վեր-
կաթիւնը: Թուրքիա իր դա-
բաւոր հիւանդութեան ընթաց-
լու յոյսն տնեցաւ պահ մը, այն
վայրէջումն երբ Հոսէյն Սա-
նախի կը նետէր Տուրա-Պահ-
չէի առջև: բայց այդ յոյսը յա-
տոնց ի գերեւ ելաւ: Կրէտէի
խնդիրն մէջ՝ Վիլհելմը իր տը-
հաճութիւնը յայտնելու համար
եզրպատու չերթալէ ուրիշ ըսն
չը կրցաւ ընել, իբր թէ այդ
այցելութեան հրաժարելով մէկ
կողմէ Սալմաստի գոհացում
տուած եղաւ, և միւս կողմէ Անգ-
լիայէն վրէժ լուծեց: Գործնապ
կանի մէջ գերման կայսեր այս
անկարողութիւնը զբաւական մը
կազմէ թէ չորս պետութեանց
համամտութիւնը բաւականէն ա-
ւելի է լուծելու համար Հայկա-
կան և Մակեթոնական խնդիր-
ները: Արդէն տարածայնութիւն
կայ թէ թուրք կառավարութիւ-
նը եւրոպական միջամտութեան
արդիւնքէն բերանը երած՝ այս
անգամ զէթ Մակեթոնիոյ համար
լուր՝ բարենորոգումներ ընելու
միտք ունի: Այս պարագան մա-
կեթոնական յիշատակական կո-
միտէներուն յուսահատութիւն

մէկ իր գգնասէն խոշոր պատան մը
կը ձգէր թուփի մը վրայ, մէկն ալ
թող կուտար որ փուչերն ու չոր
ծիւղերն իր երեսներն ու ձեռքերը
ճանկոտեն: Չէին արանջար, բարձ-
րանալ վեր, աւելի վեր, աւելի
միայն վանքերնին, ազատելու համար
վարը արարածուղ ամբոխին վայրա-
գու թեանէն, որ իր զժոխային կլափը
բացած կը սպառնար գիրենք ալ կլե-
լու:

Իրեթէ ամբողջ ժամ մը քայլերն
այսպէս լուս ու զօղանար, մինչև որ
հասան լեռանը մերձաւոր գողափը,
այ հոգի չկար վրանին: չունչերնին
բռնուած էր, սաքիւրնին բնագրան-
ցած ու հոն ինկան ջարդուած, ու-
ժասպառ:

Բնազգարար ամենուն ալ նայ-
ուածքը ստալին անգամ վարք գիւ-
ղին կողմը ուղղուեցաւ:

Ե.

Սոս, ինչ սրտակեղեք տեսարան
մըն, կը օր հոն պարզուեցաւ իրենց
աչքերուն:

Գիւղը իր ամբողջութիւնովը ան-

ասճման խորագի մը փոխուած էր,
անօրէնները տաները թալլել և արք
կրակի առած էին զանոնք, ու հիմա՛
բոցեղէն հակայ այլաբանք ամէն կէտէ,
ամէն անկիւնէ վեր բարձրանալով,
իրարու վրայ թաւալելով, խաւար
յատակին վրայ հրովան ծով մը կը
չիւնկին, մուխի թանձր պարոյրներ
թիւղոտ քուրաներ, հեկայ ջղջիկնե-
րու պէս կտորուէին այդ ստորաշէկ
ծիւղաքին վրայ:

Սիւները կը ճարճատէին, պտտերը
կը կործանէին անաղին զարդու մով,
ու անոնց անկումին տակ, կայծե-
րու նորանոր հիւքեր, բոցերան
մէջէն վեր կը սլանային, միջոցին
մէջ օրտիւղ կրակի փոսուտաներու
տնիւրջ տայափներ:

Ամբոխը գարտիկիկի հրէշնե-
րու, վազրիւս, բորենիներու խառ-
նուրդ աչք ազգը: գիւղոցած կեա-
լութիւնը արիւնտը, ինքնիցած
անոնց տապալուող միսերուն հաստիք,
գիւական պար մը սարքած էր կրա-
կին շարժը, ու անոնց սանդաղա-
մետական քրքիւնի մէջ կը խեղդուէին
կը համակին ողջ ողջ երեւող զոհե-
րու սրտապատան աղաղակները, ու

ածիւրացող սգի արներու խրիտոց-
ները:

Անարկու էր աս տեսարանը, կր-
կըծեցնող այնքան, որ մեր փախու-
տականները, որոնցմէ ամէն մէկը իր
սրտին մէջ պատառը թողած էր հոն,
չիկրցին զսպիւր իրենց ներքեւ հոգեղ
զատու թիւնը, ու լաց մըն է սկը-
սաւ, անհուն, սիրտ ծակող լաց մը,
լացերու լաց մը:

Ոմանք ծուռկի վրայ եկած, զկպի
վոր կախուած մագնիւն կը փա-
տէին, ոմանք սաքի վրայ ձեռքեր-
նին բարձրացուցած երկինքը կը
կանչէին: Երբեք մէկը զհանին վրայ
կը թափաղկէր, գալարուելով, կրճ-
կուելով, անգին մէկն ալ իր կարծիք
կը ձեռնէր:

Չեմեմանք, հատուտք, անկէք,
հաշտու թիւնք, ազօթք, պաղա-
տանք խառն կեյլիկն ամէն բերնէ:
Մեղմ, բարձր, սուր, թաւ ճիւղեր,
տղաղակներ, վայնասուններ իրոր
խառնուած մեծցան, բարձրացան,
լայնցան, փրփրեցան և ամբողջ սա-
րահարթ թնդացուցին:

Խաւարը սարսուղ աչք ողբա-
կան համանուագէն, և անոր արձա-

գանդը տարան, կրկնեց հեռուները,
սարէ սար, բայց երկինք չազդուե-
ցաւ այս անգամ զրկել պաղատան-
քէն, ու վերէն չի զրկեց իր շան-
թիւրը անագորոյն գահիճները
պատճելու, արցունքները, ազբիւրի
պէս հոծող արցունքները անուակներ
չիւնցին, որոնք սակայն մինչև
կրակին չի հասան, որ անկաշկանդ
իր սպառող գործը կը շարունակէր,
լափելով տուններուն վերջին նախար-
ները:

Թերեւս չափէն աւելի երկար տեւէր
փախստականներու այս կոծը, եթէ
քանի մը խոհեմներ չը զղուշացնէին
որ լայն չի ծագած պէտք էր հեռա-
նալ աս կողմերէն, չի յանալու համար
ծիւղներուն ձեռքը:

Լացող ամբոխը սաքի ելաւ, վեր-
ջին անգամ նոյնցան վարք վառուող,
հասնող իրենց սիրելիներուն, իրենց
աճեւեցող երգիքներուն, ու վեր-
ջին անգամ իրենց արցունքի լեզին
թափեցին այդ արիւնտ պատկերին
վրայ ու մարձուեցան լեռանը միտ-
թեանը մէջ:

Վ. Ա. Ա. Մ. Ա. Ռ. Ի. Լ. Ա. Ն.

(Շարունակելի)

